ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության
միասնական սոցիալական ծառայության պետ **Արմեն Դանիելյանին**

ՀՀ քաղ. Ռուզաննա Հարությունի Խաչատրյանից

Հ Ա Ր Ց ՈՒ Մ

2017 թվականին դեկտեմբերին Երևանի «Նաիրի» բուժկենտրոնում կատարված վիրահատության արդյունքում ինձ մոտ ախտորոշվել է աղու քաղցկեղ (զարգացման 3-րդ փուլում): 2018 թվականի փետրվար ամսից մինչև 2020 թվականի դեկտեմբերի վերջ ընդունել եմ քիմիաթերապիայի 3 կուրս (յուրաքանչյուրը՝ 6 ամիս) Ուռուցքաբանության ֆրանսիական ինստիտուտում (Երևան), որի հսկողության տակ գտնվում եմ մինչ օրս:

2022 թվականի մարտի 1-ին Երևանի թիվ 4 պոլիկլինիկայում, ուր դիմեցի հաշմանդամության կարգ ստանալու ուղեգրի համար, աշխատակիցը (Ջեմմա Ռաֆայելովնա) Ձեր ծառայության բժշկասոցիալական փորձաքննության և աջակցող միջոցներով ապահովման վարչության ներկայացուցչի հետ կապվելով՝ ինձ բանավոր փոխանցեց, թե Ուռուցքաբանության ֆրանսիական ինստիտուտի տրամադրած կոնսուլտացիոն թերթիկը Ձեզ մոտ չի ընդունվելու: Խորհուրդ տվեց գրանցվել Ուռուցքաբանության հանրապետական կենտրոնում, կամ այդ թերթիկը ստանալ «Նաիրի»-ի օնկոլոգից, որտեղ վիրահատվել եմ (ամեն դեպքում, ոչ մի օր չեմ գտնվել այդ օնկոլոգի վերահսկողության ներքո):

Մի կողմ թողնելով աբսուրդ վիճակը (երևի պատկերացնում եք, թե ինչ է նշանակում չորս տարի բուժվելուց հետո քո հիվանդությանը երբևէ չառնչված որևէ օնկոլոգից տեղեկանք ուզելը), հարց եմ ուղղում Ձեզ՝

Իրավական ի՞նչ հիմքով Ձեր ծառայության այդ վարչությունը չի ճանաչում ՀՀ-ում արտոնագրված բուժհաստատության՝ ՈՒՖԻ-ի տված փաստաթուղթը (տվյալ դեպքում՝ կոնսուլտացիոն թերթիկը):

Համաձայն Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի, Ձեր պատասխանին սպասում եմ աշխատանքային 5 օրվա ընթացքում:

Հարգանքով՝ Ռ. Խաչատրյան

(Անձնական տվյալներ, որոնք հրապարակման ենթակա չեն)